

**ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 28/7**

**19 մայիսի 2017թ.**

Քննարկվեց «ՌՌՁԱ-ԱՆԻ» ՍՊԸ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ հետքացթողումային հսկողության վարչության 21.03.2017թ. N 0003-Ա ակտի և նույն վարչության 21.03.2017թ. N 0003-Ո որոշման դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ առաջնորդվելով Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 132-րդ և «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 133-րդ հոդվածներով ամրագրված դրույթներով 28.02.2017թ. թիվ 0003 հանձնարարագրի հիման վրա «ՌՌՁԱ-ԱՆԻ» ՍՊԸ-ում իրականացվել է արտապլանային արտագնա մաքսային ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հետքացթողումային հսկողության վարչության 21.03.2017թ. N 0003-Ա ակտը, որով լրացուցիչ վճարման է առաջադրվել ընդամենը 7.771.694 դրամ ԱԱՀ, ինչպես նաև ընդունվել է 21.03.2017թ. N 0003-Ո որոշումը:

Նշվեց նաև, որ 10.04.2017թ. հարուցված թիվ N 83160117 քրեական գործի շրջանակներում ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչությունում իրականացվում է նախաքննություն:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ է՝**

«ՌՌՁԱ-ԱՆԻ» ՍՊԸ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովում: ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**